ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխություններով: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 210-րդ հոդվածը սահմանում է, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը» համապատասխանեցվում է Սահմանադրությանը և ուժի մեջ է մտնում մինչև Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը:

Ընթացիկ իրավիճակը եւ խնդիրները

2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված Սահմանադրության փոփոխություններով առանձին գլուխ է նվիրված Մարդու իրավունքների պաշտպանին: Սահմանադրության փոփոխությունների 10-րդ գլխում դրույթներ են ամրագրված Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթների եւ լիազորությունների, մարդու իրավունքների պաշտպանի ընտրության, գործունեության երաշխիքների վերաբերյալ: Հիմք ընդունելով Սահմանադրության փոփոխությունների 10-րդ գլխով սահմանված կարգավորումները, Նախագծում առաջարկվում են համապատասխան կարգավորումներ.

1. Պաշտպանի՝ այլ գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 193-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Նախագծով սահմանվում է, որ կուսակցությանն անդամակցելու կամ որևէ այլ կերպ քաղաքական գործունեությամբ զբաղվելու Պաշտպանի իրավունքը սահմանափակվում է միայն նրա **լիազորությունների իրականացման ժամանակահատվածով**: Բացի այդ պահանջ է նախատեսվում, որ հրապարակային ելույթներում Պաշտպանը պարտավոր է ցուցաբերել քաղաքական զսպվածություն:

2. Պաշտպանի անձեռնմխելիությունը

Սահմանադրության փոփոխությունների 193-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Մարդու իրավունքների պաշտպանի վրա տարածվում է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիության իրավունքը: Մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը Ազգային ժողովը լուծում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:»:

Սույն դրույթն իրացվել է Նախագծում, որտեղ սահմանվել են անձեռնմխելիության ապահովման մի շարք երաշխիքներ: Մասնավորապես նախատեսվում է, որ Պաշտպանն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել Պաշտպանի՝ իր կարգավիճակից բխող գործունեության շրջանակներում, այդ թվում՝ Ազգային ժողովում հայտնած կարծիքի կամ քվեարկության համար:

Պաշտպանի նկատմամբ քրեական հետապնդում, ինչպես նաև դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց կարող է հարուցվել միայն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաձայնությամբ:

Պաշտպանն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Պաշտպանին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:

Պաշտպանն իր լիազորությունների իրականացման ժամանակահատվածում և դրանից հետո չի կարող բացատրություն տալ կամ հարցաքննվել որպես վկա պաշտոնավարման ընթացքում իրեն հասցեագրված դիմումների կամ բողոքների, դրանց ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում ձեռք բերված փաստաթղթերի էության կամ իր կայացրած որոշումների կապակցությամբ:
Բացի վերոգրյալը Նախագիծը նախատեսում է Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների գործունեության երաշխիքներ: Հարկ է նշել, որ Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովը, այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով, արտահայտել է այն դիրքորոշումը, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պաշտպանը իր լիազորությունները մեծամասամբ իրականացնում է իր աշխատակազմի միջոցով, աշխատակազմի յուրաքանչյուր ներկայացուցիչ գործում է իր պաշտոնական լիազորությունների շրջանակում՝ Պաշտպանի անունից, Պաշտպանի աշխատակազմը պետք է օժտված լինի համապատասխան երաշխիքներով[1]:Որպես երաշխիք Նախագծով սահմանվել է, որ պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձի կամ կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետի նկատմամբ որևէ հիմքով քրեական հետապնդում հարուցվելու կամ նրան ազատությունից որևէ կերպ զրկելու դեպքում վարույթն իրականացնող մարմինն այդ մասին պարտավոր է անհապաղ տեղեկացնել Պաշտպանին՝ համապատասխան անձի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելուց անմիջապես հետո: Բացի դրանից Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձինք և կանխարգելման ազգային

[1] Տե՛ս http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2016)001-e

մեխանիզմի փորձագետները կարող են բացատրություն տալ կամ որպես վկա հարցաքննվել Պաշտպանին հասցեագրված դիմումների կամ բողոքների էության կամ դրանց ուսումնասիրությունների արդյունքում Պաշտպանի կայացրած որոշումների վերաբերյալ, ինչպես նաև դրանք այլ անձանց տրամադրել ծանոթացման միայն Պաշտպանի գրավոր համաձայնությամբ:

3. Պաշտպանի ընտրությունը

ՀՀ Սահմանադրության 192-րդ հոդվածին համապատասխան՝ Նախագծում նախատեսվել է, որ Պաշտպանի պաշտոնում կարող է ընտրվել 25 տարին լրացած, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող, բարձրագույն կրթություն ունեցող, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող, ինչպես նաև հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

Պաշտպանին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:
Հարկ է նշել, որ Նախագծով հստակեցվել է նաեւ Պաշտպանի՝ իր պարտականությունների կատարմանը անցնելու կարգը, այն է՝ Պաշտպանն իր պարտականությունների կատարմանն անցնում է Ազգային ժողովում իր երդման արարողությունից հետո՝ նախորդ Պաշտպանի պաշտոնավարման ժամկետի ավարտման հաջորդ օրը: Եթե Պաշտպանի ընտրվելու պահին Պաշտպանի պաշտոնը թափուր է, ապա Պաշտպանն իր պարտականությունների կատարմանն անցնում է Ազգային ժողովում երդման արարողությանը հաջորդող օրվանից:

4. Պաշտպանի լիազորությունները դադարելը

ՀՀ Սահմանադրության 193-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ նախատեսվել են նաև Պաշտպանի լիազորությունների դադարեցման հիմքերը:

Սահմանվել է, որ Պաշտպանի լիազորությունները դադարում են նրա լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա մահվան, հրաժարականի դեպքերում:

Միևնույն ժամանակ Նախագծով հստակեցվել է Պաշտպանի հրաժարականի դիմում ներկայացնելու կարգը: Այսպես՝ հրաժարականի դեպքում Պաշտպանի լիազորությունները դադարում են, եթե Պաշտպանի կողմից հրաժարականի դիմումը ներկայացնելուց ոչ ուշ, քան 7 օր հետո կրկին հրաժարականի դիմում է ներկայացվում: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը համապատասխան տեղեկատվությունը ստանալու պահից հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաջորդ օրը պաշտոնական հաղորդագրություն է հրապարակում Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարելու մասին: Հրաժարականի դեպքում հաղորդագրությունը հրապարակվում է Պաշտպանի կողմից կրկին հրաժարականի դիմում ներկայացնելուց հետո:

5. Պաշտպանի քննարկմանը ենթակա բողոքները

Սահմանադրության փոփոխությունների 191-րդ հոդվածը սահմանում է,որ Պաշտպանը հետևում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքով սահմանված դեպքերում՝ կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը: Հիմք ընդունելով վերոգրյալ սահմանադրական դրույթը՝ Նախագծով սահմանվել են այն դեպքերը, երբ Պաշտպանը կարող է քննարկել կազմակերպությունների դեմ բերված բողոքները: Մասնավորապես սահմանվել է, որ Պաշտպանը քննարկում է.

1) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած լիազորություններն իրականացնող կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտումները.

2) հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերը, եթե տեղեկություն կա մարդու իրավունքների կամ ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի բացառիկ հանրային նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, ովքեր չեն կարող ինքնուրույն օգտագործել իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավական միջոցները:

6. Պաշտպանի լիազորությունները նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման հարցում

Սահմանադրական փոփոխություններից բխող մյուս անհրաժեշտ կարգավորումը կապված է իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման գործում Պաշտպանի մասնակցության հետ: Նախագծով նախատեսվում է մարդու իրավունքներին եւ ազատություններին վերաբերող օրենքների եւ այլ իրավական ակտերի նախագծերը Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի ուղարկելու պայմանը: Միաժամանակ օրենքը հնարավորություն է տալիս այն բոլոր դեպքերում, երբ Պաշտպանն իրեն հասցեագրված բողոքների ուսումնասիրության արդյունքում կամ սեփական նախաձեռնությամբ սկսած հարցի քննարկման ընթացքում պարզում է, որ դրանցում բարձրացված հարցերը նորմատիվ իրավական ակտերում լուծում չունեն համապատասխան կարգավորումների բացակայության կամ թերի կարգավորման պատճառով, ապա Պաշտպանը կարող է առաջարկություն ներկայացնել նորմատիվ իրավական ակտն ընդունող մարմնին՝ մատնանշելով իրավական ակտի կատարելագործման անհրաժեշտությունն ու սահմանները:

Հարկ է նշել, որ բացի վերոգրյալից Նախագծով առաջարկվում են նաև մի շարք կարգավորումներ, որոնք արդյունավետ երաշխիքներ կստեղծեն Պաշտպանի գործունեության համար, բացի դրանից Նախագծով առաջարկվում են գործնականում տեղ գտած մի շարք խնդիրների լուծումներ: Մասնավորապես.

Պատասխանատվությունը Պաշտպանի գործունեությանը խոչընդոտելու համար

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության արդյունավետությունն ապահովելու կարևոր երաշխիք է նաև պատասխանատվության նախատեսումը Պաշտպանի գործունեությանը խոչընդոտելու համար: Գործող օրենքը սահմանում է, որ Պաշտպանի որոշումների վրա ազդելու նպատակով նրա գործունեությանը միջամտելը կամ պաշտոնատար անձանց կողմից Պաշտպանի՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը կամ սահմանված ժամկետներում նյութեր կամ փաստաթղթեր չներկայացնելը կամ Պաշտպանին սպառնալը կամ նրան վիրավորանք հասցնելն առաջացնում է պատասխանատվություն՝ դատավորի կամ դատարանի հանդեպ համանման խախտումների համար նախատեսված կարգով և չափով: Նախագծով ոչ միայն սահմանվել է, որ Պաշտպանի գործունեությանը խոչընդոտելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն, այլ նաև սահմանվել է ընթացակարգ, որով այն դեպքերում, երբ սահմանված ժամկետում և պայմաններում Պաշտպանին չի տրամադրվում համապատասխան տեղեկատվությունը, պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է Պաշտպանի առաջարկի հիման վրա քննարկել և կարգապահական պատասխանատվության ենթարկել համապատասխան տեղեկատվություն չտրամադրած պաշտոնատար անձին, ինչպես նաև այդ մասին անմիջապես տեղեկացնել Պաշտպանին:

Պաշտպանին դիմելը

Նախագիծն առավել մանրամասն է նախատեսել նաև Պաշտպանին դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, դիմելու ձևը, ուրիշի իրավունքների պաշտպանության համար դիմելու կարգը: Մասնավորապես ամրագրվել է, որ անձի գրավոր համաձայնությամբ նրա իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանին կարող են դիմել նաև հասարակական կազմակերպությունները: Բացի դրանց ամրագրվել են այն դեպքերը, երբ այլ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանին դիմելու համար լիազորագիր կամ գրավոր համաձայնություն չի պահանջվում, այն է՝ երբ դիմումը կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն օգտագործել իրենց պաշտպանության իրավական միջոցները:

Պաշտպանի լիազորությունները որպես կանխարգելման ազգային մեխանիզմ

Մարդու իրավունքների պաշտպանի մասին գործող օրենքի 6.1-ին հոդվածը սահմանում է, որ Պաշտպանը հանդիսանում է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի» կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ: Նշված իրավակարգավորումից բացի, Պաշտպանի նոր կարգավիճակից բխող այլ իրավական կարգավորումներ օրենքում չեն նախատեսվել: Բավարար իրավակարգավորման բացակայության վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնել նաև ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման ենթահանձնաժողովը (այսուհետ՝ Ենթահանձնաժողով)՝ Հայաստանի Հանրապետության՝ կանխարգելման ազգային մեխանիզմին խորհրդատվական աջակցություն տրամադրելու նպատակով 2013թ. սեպտեմբերին կատարած այցի վերաբերյալ 15.10.2014թ. Հայաստանի Հանրապետությանը ներկայացված զեկույցում (այսուհետ՝ Զեկույց): Այսպես՝ Ենթահանձնաժողովն

անդրադարձել է Կանխարգելման անկախ ազգային մեխանիզմի ինստիտուցիոնալ ձեւաչափին՝ առաջարկելով այն հստակեցնել՝ հաշվի առնելով «Մարդու իրավունքների պաշտպանության եւ խրախուսման ազգային հաստատությունների կարգավիճակին վերաբերող սկզբունքները»: Զեկույցում շեշտադրվել է նաեւ պետության պարտավորությունը՝ Կանխարգելման ազգային մեխանիզմի համար իր կողմից սահմանված ձեւաչափով եւ հաճախականությամբ այցեր իրականացնելու հնարավորության ապահովման, անհրաժեշտ ռեսուրսների տրամադրման վերաբերյալ, ինչը ենթադրում է նաեւ բավարար թվով անձնակազմի եւ նրանց անկախությունը երաշխավորելու անհրաժեշտություն: Առաջարկվել է նաեւ, որ Կանխարգելման ազգային մեխանիզմը՝ իր ներկայիս եւ ապագա կառուցվածքով, համալրվի բավարար թվով աշխատակիցներով, որպեսզի նրա կարողությունը համապատասխանի մանդատով նախատեսված ազատությունից զրկման վայրերի թվին, ինչպես նաեւ բավարար լինի կատարելու իրեն վերապահված մյուս կարեւոր գործառույթները՝ համաձայն Կամընտիր արձանագրության: Ենթահանձնաժողովը նաեւ առաջարկել է, որպեսզի ապահովվի ազգային մեխանիզմի փորձագետների պահանջվող ունակություններն ու մասնագիտական գիտելիքները, ներառյալ՝ բժշկական, հոգեբանական եւ այլ համապատասխան մասնագիտական հմտություններ:

Նախագծով սահմանվում են մանրամասն կարգավորումներ Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի վերաբերյալ: Մասնավորապես սահմանվել են Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի լիազորությունները: Ամրագրվել է Պաշտպանի լիազորությունը ներգրավել անկախ մասնագետներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ովքեր ձեռք են բերում կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետի կարգավիճակ: Սահմանվել է փորձագետների ներգրավման կարգը և այլն:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառություն

Նախագծով նախատեսվել է Պաշտպանի ևս մեկ կարևոր գործառույթ: Պաշտպանին վերապահվել է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մոնիթորինգի, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության իրավասությունը:

Ազատությունից զրկման վայրերի հասկացության հստակեցում

Հաշվի առնելով Պաշտպանի գործունեության ընթացքում նախկինում արձանագրված խնդիրները՝ տարբեր հաստատություններ անարգել մուտք գործելու հետ կապված, հստակեցվել է հաստատությունների ցանկը եւ համապատասխան լրացումներ են կատարվել հարակից օրենքներում: Մասնավորապես Նախագծի համաձայն՝ օրենքի իմաստով ազատությունից զրկման վայրեր են համարվում՝

1) ձերբակալված անձանց պահելու վայրերը.

2) քրեակատարողական հիմնարկները.

3) հոգեբուժական կազմակերպությունները.

4) կայազորային կարգապահական մեկուսարանները.

5) ազատությունից զրկված անձանց տեղափոխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցները.

6) ցանկացած այլ վայր, որտեղ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի որոշմամբ, հրամանով կամ ցուցումով, նրա համաձայնությամբ կամ թույլտվությամբ անձը զրկվել է կամ կարող է զրկված լինել ազատությունից, ինչպես նաև ցանկացած այնպիսի վայր, որն անձը չի կարող ինքնակամ լքել առանց դատարանի, վարչական կամ այլ մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման կամ թույլտվության:

Պաշտպանին առընթեր խորհուրդը

Պաշտպանը կարող է ստեղծել իրեն առընթեր խորհուրդներ՝ կազմված մարդու իրավունքների բնագավառում անհրաժեշտ փորձ և գիտելիքներ ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից և անկախ մասնագետներից:
Պաշտպանը, խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով, կարող է ստեղծել փորձագիտական խորհուրդներ՝ կազմված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ ունեցող անձանցից:

Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության առանձնահատկությունները
Նախագծով հստակեցվել են նաև Պաշտպանի աշխատակազմի, աշխատակազմում ծառայության վերաբերյալ դրույթները:

Նախագիծը մասնրամասն կարգավորման է ենթարկել Պաշտպանի աշխատակազմում իրականացվող պետական ծառայությունը: Նախատեսվել են նաև մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում պաշտոններ զբաղեցնող անձանց դասային աստիճաններ:

Ամրագրվել է նաև Պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը: Մասնավորապես սահմանվել է, որ աշխատակազմը կազմված է երկու դեպարտամենտից, կանխարգելման ազգային մեխանիզմի ստորաբաժանումից, քարտուղարությունից, մարզային և Պաշտպանի որոշմամբ ստեղծվող այլ ստորաբաժանումներից, ինչպես նաև Պաշտպանի խորհրդականներից, օգնականներից և մամուլի քարտուղարից: Սահմանվել է, որ Պաշտպանի աշխատակազմի ղեկավարումն իրականացնում է աշխատակազմի քարտուղարը՝ քարտուղարության միջոցով: Մանրամասն սահմանվել են քարտուղարության գործառույթները:

Նախագծի մշակման ընթացքում ներգրավված մարմինները

Նախագծի մշակման աշխատանքներն իրականացվել են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ միասին:

Կարգավորման նպատակը եւ ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության արդյունավետության բարձրացում, Պաշտպանի եւ նրա աշխատակազմի անկախության երաշխիքների ամրապնդում, ինչպես նաեւ որոշ՝ ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման տեղիք տվող դրույթների հստակեցում: